





10. 4

Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Ճ/Հ  
Ճ/Հ

# ՄԱՐՄԱՐՁՈՒԹԻՒՆ

25 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՂԻԳ

ԿԱՌԵ ԿԱՆԵԱՆ ԱՐԵԳԱԾԻԹ ՏՊԵՐԱՆ

1901

16440

Дозволено цензурою. С.-Петербургъ, 20 Апрѣля 1901 года.



Типографія „Пушкинська Скоропечатня“, Лештуковъ 4.

32-2008

Մարդու համար աւելի օգտակար, աւելի արժանավայել է ինքնաշխատութեամբ պահպանել առողջութիւնն, քան մեկ լիսով բժշկի և դեղի օգնութեան դիմել:

Առողջութիւնը պահպանելու և մանաւանդ ոփանդութիւններից նախադրուշանալու համար անհրաժեշտ է օգտակար տեղեկութիւններ տարածել ժողովրդի մէջ:









Ա.

Ճողովուրզը մանրանում — այլասեր-  
ւում է: Խւրաքանչիւր տարի բժիշկ-  
ները հրապարակ են հանում բազմա-  
թիւ ու բազմազան հիւանդութիւն-  
ներ, որոնք այնքան զոհեր են տա-  
նում ժամանակակից մարդկութիւնից:

Սյու ցաւալի երեցիթի պատճառներից մէկը  
նպատակայարմաք ֆիզիքական գաստիարակութեան  
բացակայութիւնն է:

Մենք մոռանում ենք, որ մասւոր կրթու-  
թիւնն առանց ֆիզիքական գաստիարակութեան  
միայն բացասական հետևանքների կարող է հաս-  
ցնել:

Մեզանում զրեթէ ոչ մի տեղեկութիւն չու-  
նին առողջապահութեան և հիւանդութիւններից  
նախազգուշանալու մասին:

Ահա հենց այդ պատճառով մարդ սախազուած  
է լինում իր ժամանակին չգործածուած մօնկա-  
վարժական մարմնամարդութեան փոխարէն ապա-

դայում բժշկական մարմնամարզութեան օպնութեանը դիմել:

Մկանների վարժութիւնը կատարելագործում է մարդուն թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս, որովհետեւ նա ազդումէ ոչ միայն ամբողջ օրգանիզմի, այլ և հոգեկան գործունեութեան վրայ:

Այդ բանն հաստատում են առօրեայ փորձնու մարդկային ամբողջ կեանքը:

Այսպէս օրինակ. շարժական կեանք վարող մարդիկ այնպէս հեշտ և յաճախ չեն հիւանդանում, ինչպէս նստակեաց մարդիկ:

Մարմնամարզութեան աչքի ընկնող հետեւանքներից մէկն այն է, որ հետզհետէ մկաններն ամրանում են:

Այդ երեսյթը նկատուած է հենց նրանից, որ իւրաքանչիւր շարժում, իւրաքանչիւր գործողութիւն մի քանի անգամ կրկնուելուց յետոյ աստիճանաբար հեշտանում է:

Կենդանական օրգանիզմն էլ մի մեքենայ է, միայն այն տարբերութեամբ, որ նա իր գործունեութեան շնորհիւ հետզհետէ կատարելագործում է և աւելի պակաս ոյժ պահանջում:

Նայեցէք ջութակահարի կամ զաշնամուր ածողի մատներին. որքան արագ, որքան ճարպիկ կերպով են շարժւում նրանք:

Բայց չէ որ դա շարունակ կրկնուող վարժութեան հետեւանքն է:

Ինչպէս յայտնի է, նեարպերն ու նրանց կենարոններն են մեր բոլոր գործողութիւնների իսկա-

կան շարժիչ մեխանիզմը կազմում ուրեմն մեր իւրաքանչիւր շարժումը որոշ ազգեցութիւն ունի նաև նեարդային համակարգութեան վրայ:

Ահա այդպիսով բոլոր ֆիզիքական վարժութիւնները կազմում են ոչ միայն մկանների, այլ նեարդերի համակարգութեան վրայ:

Ահա այդպիսի բոլոր ֆիզիքական վարժութիւնները կազմում են ոչ միայն մկանների, այլ նեարդերի մարմնամարդութիւն:

Ժամանակակից կեանքը և հսկայական քայլերով առաջադիմող քաղաքակրթութիւնը ստեղծել են բազմաթիւ նոր պահանջներ, որոնց բաւարարութիւն տալու համար մարդ պիտի գործազրէ մշտական ջանք ու եռանդ: Հակառակ դէպքում նա յետ կմնայ և կարիքների ու չքաւորութեան դիրկը կընկնի:

Դժբախտաբար գաստիարակներն անուշադիր են թողնում այն սերտ կապը, որը զոյութիւն ունի ֆիզիքական ու բարոյական կրթութեան մէջ:

Ֆիզիքական գաստիարակութեան գործը ոչ մի ժամանակ այնպիսի ցաւալի զրութեան մէջ չէ եղել ինչպէս այժմ:

---

Բ.

Մարմնամարդութեան իսկական հայրենիքը չին Յունաստանն է:

Այնտեղ իւծաքանչիւր անհատ աշխատում էր համապատասխան վարժութիւններով ամրապնդել

իր մարմինը և առաջ նրան գեղեցիկ ու կանոնաւոր տեսք: Յոյները հաւատացած էին, որ առողջ հոգին միայն առողջ մարմինի մեջ կարող է լինել:

Փիլիսոփայ Պլատոնը հոգեպէս կազ էր անուանում այն մարդկանց որոնց հոգին ու մարմինը հաւասար չափով զարգացած չէին:

Յունական դիմնազիաներում թէե աւանդումէին զանազան դիտութիւններ, բայց զլիաւոր տեղը ֆիզիքական վարժութիւններին էր տուած, զլիաւոր ուշադրութիւնը ֆիզիքական դաստիարակութեան վրայ էր զարձրած:

Յոյները մի առանձին հետեւողականութեամբ կատարումէին բազմաթիւ ու բազմազան վարժութիւններ, սրպէսզի ձեռք բերեն ճարպիկութիւն, առողջութիւն և ամբողջ մարմին գեղեցկութիւն հոգեկան առողջութեան հետ միացած:

Նրանք զանազան վարժութիւններ էին կատարում նետ ու աղեղով, սրերով ու նիզակներով. բայց զրանից առանձին ուշը էին դարձնում նաև վազելու, լողանալու, մենամարտութեան, պարերի և ուրիշ զուարձական խաղերի վրայ:

Միջին դարերում, երբ ասպետական կեանքը ծաղկած զրութեան մեջ էր, երբ զէնք ու զրանք և պատերազմական հմտութիւնը մի առանձին պարձանիք էր համարւում, մարդիկ զլիաւոր ուշադրութիւնը դարձնումէին զինուորական վարժութիւնների վրայ: (Այդպիսի մարմնամարզական վարժութիւնների շարքում զլիաւոր աեղը բռնում էր սրավարժութիւնը (Փեխտովանիէ):

Բայց զրանից յետոյ մարմնամարզութիւննե  
չետղնետէ անուշագրութեան մասնուեց. և միայն  
XIX դարի սկզբում նորից զրաւեց իր պատուա-  
ւոր տեղը գաստիարակչական զործում:

Այդ հարցի համար իր ժամանակին շատ է  
աշխատել յայտնի փիլիսոփայց Ժան-Ժակ Ռուսսօն,  
որն անդադար կրկնում էր, թէ թոյլ մարմնոր  
թուլացնում է և հոգին, թէ հոգեկան ու ֆիզի-  
քական առողջութեան համար անհրաժեշտ է զա-  
նազան վարժութիւններով ամրայնել մարմնը:

Ժան-Ժակ Ռուսսօյի այդ գաղափարը քարոզե-  
ցին նաև ուրիշները և այդպիսով մարմնամարզու-  
թիւնը նորից ուշագրութիւն դրաւեց թէ ֆրան-  
սիայում, թէ Գերմանիայում և թէ մանաւանդ  
Շուեցիայում, որտեղ նա հասաւ ամենաբարձր զար-  
դացման աստիճանին:

Այժմ Շուեցիայի բոլոր զպրոցներում մար-  
մնամարզութիւնն աւանդուումէ իրբե մի զինաւոր  
պարաւորեցուցիչ առարկայց: Այդտեղ ի միջի այ-  
լոր կայ մարմնամարզական մի մեծ ինստիտուտ—  
երեքամելոյ գասընթացով:

Ժամանակակից քաղաքակրթութիւնը, դոյու-  
թեան կռուի ընթացքում աճեցնելով մարդկային  
զուարձութիւնները, պատճառ է զարձել մի շատ  
ցաւալի երեսյթի, այսինքն առաջացրել է մի մեծ

խումբ մարդկիկ, որոնք ոչ հիւանդ են և ոչ բոլորովին առողջ:

Այդ մարդկանց մարմնի վրայ հիւանդութեան նշան չե երեսում, բայց այնուամենայնիւ նրանց օրգանիզմն իր մէջ պարունակումէ զանազան տեսակի ու աստիճանի խանդարութեաներ:

Ըստհանուր առմամբ այդ խանդարութեան առաջ են դալիս արեան անկանոն ու անբնական շրջանառութիւնից:

Արեան հոսանքը համեմատաբար մեծ է լինում մորթին այն անդամում, որն աւելի յաճախ է շարժում, աւելի երկար է գործում:

Մտաւոր աշխատանքով պարապող մարդու դանկն աւելի շատ արիւն է գրաւում, քան թէ այն մարդունը, որը կամ մտաւոր աշխատանք բոլորովին չունի, կամ զրա հետ միասին ունի և ուրիշ ֆիզիքական վարժութիւններ:

Շատ հասկանալի է, որ զէպի դանկն աւղղուած արեան մեծ հոսանքը պակասեցնումէ մարմնի միւս անդամների արիւնը:

Ահա հենց այդ պատճառով մարմնի զանազան անդամների մէջ պարունակուած արեան քանակութիւնը որոշ չափով կախուած է մարդու զքաղմունքից:

Ինչպէս յայտնի է, նստակեաց կեանք վարող մարդիկ մի որեւէ ֆիզիքական աշխատանք կատարելիս չափազանց շուտ են յոգնում:

Նրանց փորի մէջ մեծ քանակութեամբ արիւն է հաւաքւում և այդ պատճառով առաջ է դալիս

կասկածութիւն, մատախոհութիւն, մի առանձին տիսրութիւն, ախորժակի պակասութիւն, փորկապութիւն, թթունքային դրութիւն (հեմարց) և այլն:

Բացի դրանից նրանց կրծքի վանդակում էլ որոշ փոփոխութիւններ են տեղի ունենում, որոնք գժուարացնում են շնչառութիւնը:

Թէև այդպիսի մարդկանց շատերը մի քանի շաբաթ ամառանոցային հանգիստ են վայելում, թէև զրանով աշխատում են իրանց քայքայուած ոյժերը վերականգնեցնել, բայց այնուամենայնիւ դա շատ չնեխն միջոց է մեծ չարիքի համեմատութեամբ:

Գլխի ու մկանների աններգաշնակ և անհաշմաշի գործունեութիւնից առաջ են զալիս ստամոքսի և աղիքների մի քանի հիւանդութիւններ, որոնք արժանի են առանձին ուշադրութեան:

Դժուար շնչառութիւնը, փորկապութիւնը, սրտի թթւոցը, սրտի գդալի ցաւը մեծ մասամբ առաջ են զալիս նրանից, որ անհատն անկանոն կեանք է վարում, իր նետրդերի պահանջներն անուշադիրի է թողնում:

Ետա անգամ՝ մարդ յոգնումէ այն պատճառով, որ աշխատանքը կատարելումէ ոչ սիրով և անկանոն ու հակառաղջական պայմաններում:

Մեր միջնակարգ դպրոցներում բարձր գասարանների աշակերտաները շատ շուտ են ուժասպառ լինում, որովհետեւ նրանց քննութիւնները հետզետէ տեկլանում են և պարապմունքները չա-

փաղանց անկանոնն կերպով են դասաւորուած լեռում:

Ճիշտ է, մեր գպրոցներում տւանդւում են և մարմնամարզութեան գասեր, բայց նրանք յանկալի օդուարը չեն տալիս, որովհետեւ վարժութիւնները կատարւում են ոչ թէ բաց օդում և խրաքանչիւր աշակերտի յանկութեան ու Փիղեքական դարդացման համեմատ, այլ մեծ մասամբ փոշեով լի սեռեակներում և ուսուցչի պատուերով:

Ահա այդ է պատճառը, որ աշակերտները ուժասպառ են լինում թէ մտաւորապէս և թէ Փիղեքապէս:

Իսկ ընտանիքներում Փիղեքական գաստիարակութիւնն աւելի ողբայի զրութեան մէջ է: Մեր ծնողներից շատ շատերը մարմնամարզութիւնն աւելորդ շռայլութիւն են համարում, այն ինչ միայն լաւ սնունդն ու մարմնամարզութիւնն են առողջութեան հիմքը կազմում:

Փիղեքական խելացի վարժութիւնների շնորհիւ երեխայի ուղեղն էլ զարմանալի փոփոխութեան է ենթարկում: Կա թարմանում է և ընդունակ դառնում նորանոր մաքեր ու դադափարներ ըմբռնելու:

Մեղանից շատերը նկատած կլինին, որ մարդ մի տեսակ ծանրութիւն է զգում, երբ կուացնում է զլուխը, երբ, օրինակ, ուղում է յատակից մի որեւէ բան բարձրացնել:

Դա առաջ է գալիս նրանից, որ այդ ժամանակ դիմում մեծ քանակութեամբ արիւն է հաւաքւում:

Մարգիկ կարող են այդպիսի դէպքերում նոյն իսկ կաթուած ստանալ...

Սակաւարիւն մարգկանց վերաբեզմամբ այդ դէպքը ուրիշ տեսակ է լինում:

Ահա այստեղ էլ մեծ ծառայութիւն կարող է մասառցանել բժշկի խորհուրդով կատարուած մարմնամարզութիւնը:

Նրա միջոցով կարելի է կանոնաւորել զարկերակի դորձունէութիւնը և միշտ էլ խուսափել անակընկալ փորձանքից:

Թէ սկլերող (այսինքն այն հիւանդութիւնը, երբ զարկերակները հաստանում և փխրուն են դառնում) — թէ վազաժամ ուժասապառութիւն և թէ ուրիշ շատ ու շատ անախորժութիւններ առաջ են դալիս ֆիզիքական անբաւարար գաստիարակութիւնից:

Սկլերոզը կարող է առաջ դալ նաև սիֆիլիսից, արբեցողութիւնից և անկանոն սննդառութիւնից:

Երբէք չափազանցութիւն չի լինի, եթէ առենք, թէ կանոնաւոր մարմնամարզութիւնը կարող է նոյն իսկ մարգկային կեանքն երկարացնել, որովհետեւ նա կամրապնդէ մեր բոլոր մկանները, կկանոնաւորէ արենատար անօթների դորձունէութիւնը, որից կախուած է մարգու կեանքն ու առողջութիւնը:

Իհարկէ չպէտք է մառանալ տնտեսական, սոցիալական և հոգեբանական պատճառները:

Դ.

Շատերը կարծում են, թէ արեան սակաւութիւնը—(անեմիա և խլորող)—միայն կանացի հիւանդութիւն է, բայց դա սխալ է, որովհետեւ տղամարդիկ էլ նոյն չափով ենթարկւում են այդ հիւանդութեանը:

Արեան սակաւութեան պատճառները բազմաթիւ են:

Սյու հիւանդութեան ժամանակ արեան միջի գնդակները որոշ փոփոխութեան են ենթարկւում և արիւնը չի կարողանում բաւարար քանակութեամբ թթուածին—(թթուածինը օդի բաղադրիչ մասերից մէկն է, մենք ներշնչում ենք թթուածին և արտաշնչում ենք ածխածին)՝մարսել:

Յաճախ արեան սակաւութեանը միանում է թուլակամութիւն, այսինքն այնպիսի դրութիւն, երբ մարդ տրամադրի է լինում անդործութեան և շատ չաղանում է, (երբէք չպէտք է կարծէլ թէ սակաւարիւն մարդիկ անպատճառ նիհար են լինում. ընդհակառակը շատերը չաղ են լինում, որովհետեւ արեան սակաւութիւնն երբեմն նպաստում է չաղանալուն: Չաղութիւնն էլ նպաստում է արեան սակաւութեանը:

Սյօպիսի մարդկանց համար չափազանց զժուար է մարդաքարերով (զիրի) վարժութիւն կատարելն ու մանդալը. ուստի և բժիշկները դրանց խորհուրդ են առլիս զիմել որոշ սննդառութեան (զիէտայի)

և գործածել շուեզական մարմնամարզութիւն, որը կատարումէ առանձին գործիքներով:

Սյդ գործիքների շնորհիւ կարելի է մարմնի իւրաքանչիւր անդամին տալ ցանկալի դիրքը:

Կան և ուրիշ շատ հիւանդութիւններ, որոնք համապատասխան բժշկական մարմնամարզութեամբ մեծ կամ փոքր չափով թեթեանումեն, իսկ երբեմն բոլորովին բժշկումեն:

Դժբախտաբար մեղանում միշտ մոռացութեան են տալիս այն ճշմարտութիւնը, թէ նպատակայարմար մարմնամարզութիւնը բարելաւում—ազնուացնումէ մարմինն ու հոգին, ծառայումէ իրրեզուարձութեան առարկայ և կարող է նոյն իսկ այսպէս անոււանեալ «Երիաասարդութեան մեղերի ու ախտերի» առաջն առնել:

Մեր խօսքը սեռական զգացմունքների մասին է, այն զգացմունքների, որոնցից բազմաթիւ չարիքներ են առաջ գալիս, որոնք շատ շատերի ամբողջ առողջութիւնն են քայքայում:

Իւրաքանչիւր մայր պարտաւոր է հասկանալ իր զաւակների օրգանիզմի մեջ կատարուած զանազան փոփոխութիւնները, պարտաւոր է հետեւել նրանց ֆիզիոլոգիական բոլոր գործողութիւններին, որպէսզի հարկաւոր դէպքում օգնութեան հասնի և ուղիղ ճանապարհը ցոյց տայ:

Աւելորդ են կեղծ ամօթխածութիւնն ու ծածկամտութիւնը:

Մայրը պարտաւոր է միշտ իմանալ դեռահաս որդու բոլոր դադանիքները, եթէ չի ուզում ապա-



դայում՝ ողբար նրա քայքայուած առողջութեան վրայ, եթէ չի ուզում անօգուտ վիշտ ու հառաչանքով քաւել իր անստարբերութեան մեղքերը...

Ինչպէս յայտնի է, սեռական զործունէութեան վերջնական նպատակն է բեղմնաւորութիւնը, այսինքն մարդկային ցեղի շարունակութիւնը:

Այդ նպատակին հասնելու համար ծառայում են սեռական զգացմունքները, որոնք ինքնաբերաբար ծնունդ են ստանում օրգանիզմների մէջ իրեւ սեռական հակումն:

Օրգանիզմի զարգացման համեմատ զարգանումէ և սեռական զգացմունքը, որից առաջ է զայիս անհանգիստ քուն, երազագիճութիւն և այլն:

Այդ բոլորը վառումնեն դեռահաս պատճենուերեակայութիւնը դէպի միւս սեռի ներկայացուցիչները:

Սուածին շրջանում սերմը դեռ հասունացած չի լինում, որովհետեւ այդ երեցիթը տեղի է ունենում միայն 18—20—25 տարեկան հասակում:

Իհարեկէ այստեղ մեծ նշանակութիւն ունին իւրաքանչիւր օրգանիզմի որոշյատկութիւններն ու զարգացումը:

Ըստհանրապէս 16—18—20 տարեկան հասակում անհատն աւելի զգայուն, աւելի գիւրազրդիո. է դառնում: Նրա սեռական հակումն ուժեղանումէ և զիշերային սերմնահոսութիւնն հետզիւտէ աւելի ու աւելի յաճախ կրկնելում:

Շատ անգամ զիշերուայ ընթացքում մի քանի անգամ երազագիճութիւն է պատահում: Պա-

տանին չի կարողանում հանդիսա քնել: Անվերջ  
երազները միշտ զըրգուում են սեռական կիրքը:  
(Սյդ ժամանակաշրջանում պէտք է խոյս տալ մաե-  
զէն կերակրից):

Սյդպիսի լարու ած զըրութիւնը շարունակւում  
է մի որոշ ժամանակ և ապա մի քանի օրով դա-  
գար է անում, որպէսզի յետոյ հրդէնի նման նորից  
բռնկուի, նոր ոյժ ու եռանդ ստանայ:

Բայց եթէ պատանին հետեւի ժուժկալու-  
թեան—(և իսկապէս նա պարտաւոր է հետեւել  
այդ սուրբ օրէնքին)—եթէ կանոնաւոր կեանք  
վարէ և իր կիրքը զապէ, այն ժամանակ սեռական  
բռնկումներն հետզհետէ կհանդարտուին և աւելի  
երկար ընդմիջումներ կունենան:

Տղամարդը կտարելապէս հասունանում է  
միայն 25 տարեկան գառնալուց յետոյ: Միայն այդ  
ժամանակ նա բոլորովին պատրաստ է ամուսնա-  
կան կեանք վարելու:

Ամենաթունդ սեռական գործունէութիւնը տե-  
ւումէ 25-ից մինչեւ 40 տարեկան հասակը: Դրա-  
նից յետոյ իր գագաթնակէտին հասած սեռական  
հակումը կամաց-կամաց մեզմանումէ. 50 տարին  
լրանալուց յետոյ նա աւելի ու աւելի է նուա-  
զում և մինչեւ 60—70 տարեկան հասակը բոլորո-  
վին վերջանում—անհետանումէ:

Իհարկէ դա միայն ընդհանուր օրէնք է ա-  
ռողջ մարդկանց համար: Կան և բազմաթիւ բա-  
ցառութիւններ և շեղումներ:

Իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր ժողովուրդ

կամ անհատ ունի իր որոշ սեռական յատկութիւնները, որոնք մեծ չափով կախուած են երկրի զիրքից, կլիմայից, միջավայրից, ժառանդականութիւնից և այլն:

Թէ ջղային, թէ արբեցող և թէ անհամապատասխան հասակում ամուսնուցած ծնողների զաւակները սովորաբար ջղային կազմուածք են ունենում:

Դրանք լինում են ոչ իրանց տարիքի համեմատ զարգացած, զգայուն, անհետեղական և թուլակազմ:

Դրանց սեռական զգացմունքը հասունանում է վաղաժամ:

Ժամանակ առ ժամանակ նոյն աեսակ յատկութիւն են արտայայտում և հոգեպէս այլասերուած անհատները, որոնք լինում են խարզախ ու ստախօս, դաժան ու անդութ, որոնք առանց ճընշուելու տանջում են կենդանիներին ու թռչուններին, առանց ամաչելու կատարում են այս կամ այն տգեղ վարմունքը:

Դրանց սեռական հակումն էլ սովորաբար շուտ է զարգանում:

Նաև հասկանալի է, որ այդպիսի երեխանները կատարեալ ցեցեր են իրանց ընկերների համար:

Բայց միթէ դրանք են յանցաւորը: Ի՞արկէ ոչ:

Նրանք միայն քաւում են իրանց անարժան ծնողների մեղքերը:

Անա հենց այդ պատճառով հասարակութիւնը պարտաւոր է խնամք տանել նրանց վրայ, պար-

տաւոր է բժշկական ու մանկավարժական միջոցներով ուղղել նրանց վաս կողմերը:

Հակառակ դէպքում նրանք բոլորն էլ կարող են դառնալ թափառաշրջիկ, գող, ոճրագործ, մարդասպան և վերջիվերջյ աքսորանքի արժանանալ:

Ահա այդպիսի դառն պառագներ է տալիս ձնողների զեղիս կենցաղավարութիւնն ու անհոգութիւնը, այդպիսի ցուալի արդիւնքի է հացնում մարդկային անզուսու կեանքը:

---

b.

Սեռական գործունեութեան վրայ ազգող ամենալաւ միջոցներից մէկն է դաստիարակութիւնը:

Խելացի դաստիարակութեան միջոցով կարելի է իր ժամանակին արմատախիլ անել երեխայի վասձգառմներն ու սովորութիւնները, կարելի է մշակել ուժեղ կամք, որը մի անցաղթելի զէնք է չարիքների գէմ կոռւելու համար:

Թոյլ կամքի տէր պատանին երբէք չի կարող զալել իրան, չի կարող ձնշել իր սեռական ցանկութիւնը և ժուժկալութիւն պահպանել:

Եթէ նա չկարողանայ իր կրքին բնական ճանապարհով յաղուրդ տալ, այն ժամանակ կդիմէ մարմաշարժութեան (օնանիզմի) — որը նոյնպէս չափաղանց վնասակար հետքեր է թողնում:

Հարկաւոր է նկատել որ այդ հարցում մեծ նշանակութիւն ունի միջավայրը, որը կարող է

շաապեցնել կամ՝ դանզաղեցնել սեռական դարձացումը:

Սյդ տեսակէտից շատ աննապատ պայմաններ են ներկայացնում՝ գործարանները, արհեստանոցները և նեղ ու մութ բնակարանները, որտեղ արական և իգական սեռի ներկայացուցիչները մրշտական յարաբերութեան մէջ են:

Տարուստ ընտանիքներում էլ երեխանների սեռական զգացմունքների վրայ վատ ազգեցութիւն կարող են ունենալ աղախիններն ու ծծմայրերը:

Անհամապատասխան բայեանները, պատկերներն զրքերն էլ կարող են զրգուել անհատի երեակայութիւնն ու սեռական հակումը, ուստի և որոշ հասակում պէտք է խոյս տալ նրանից:

Զափազանց վատ ազգեցութիւն ունին հասակաւորների խիստ վարմունքն ու բարկութիւնը: Ի՞նչ անէ, ում զիմէ խեղճ պատանին: Նրա մէջ առաջ է եկել նոր զգացմունք, մի անզուսպ հակումն, բայց նա չի կարող իր ծնողների կամ զըրպարատղների կարծիքն ու խորհուրդը հարցնելը որովհետեւ նրանք կբարկանան, կչարսնան: Նա առանձնանում է և աշխատումէ յազուրդ տալ իր ցանկութեանը:

Ահա այդպիսով առաջ է գալիս կորստարեր մարմնաշարժութիւնը: Եատ անդամ՝ էլ նա սկսում է ժամանակից շուտ յարաբերութիւն ունենալ կանանց հետ, որ նոյնպէս վեասումէ առողջութեանը:

Սյդ տեսակէտից շատ վեասակար են՝ փափուկ աթոռների վրայ երկար նստելը, չժամբած ձի հեծ-

նելը, հեծանիւով երկար մանգալը, չոփազանց տաք սենեակում քնելը, երկար ժամանակ ոսի վրայ անշարժ կանգնելը, սխտոր, տաքտեղ, ոգելից ըմպելիներ գործածելը, նեղ անդրավարտիկ հագնելը—(աւելի լու է լայն, առանց առաջի ձեղքի և զրպանների անդրավարտիքը—ինչպէս մատրոսներինը) և այլն:

Վնասակար հետեւանքներ առաջանում են և այն ժամանակ, երբ յետին անցքը զանազան պատճառներից քոր է զալիս, երբ միզապարկում քար է գոյանում, երբ վերջապէս պատանին իր ծուլութեան պատճառով քնելուց առաջ միզապարկն ու աղեքները չե գատարկում:

Սեռական զրդումները չոփաւորելու համար անհրաժեշտ է գործածել կաթ, ջուր, բանջարեղին, թռչունների միս, ալիւրային կերակուր և այլն:

Լարուած սեռական զգացմնները հետզհետէ ուժեղանալով՝ ամեն կողմից թռւլացնումէ պատանուն, ամեն կողմից ձնչում ու քայքայում՝ նրա օրդանիզմը:

Պատանին չե կարողանում կենարոնանալ, չե կարողանում մի ուրիշ բանի մասին մտածել: Նրան զբաղեցնողը սեռանան կիրքն է, նրան տաննջողը այդ կրքին յազուրդ տալու ցանկութիւնն է: Այդպիսի պայմաններում շատ անգամ ցերեկներն էլ սերմնահոսութիւնն է, պատահում:

Այդպիսի պատահին հետզհետէ նիհարում ու գունատւումէ, նրա յիշողութիւնը թռւլանումէ և նոյն իսկ բնաւորութիւնը փոխւում:

Վերեռում յիշած պատճառները շտափեցնում  
և զրգուում են սեռական զգացմունքը և պատա-  
նին կամ մարմնաշարժութեան է զիմում կամ  
վաղաժամ՝ յարաբերութիւն է սկսում: Երկու գեղ-  
քում էլ նրա տուղջութիւնը մեծ հարուած է ստա-  
նում: Իսկ երբեմն առաջ են դալիս կորստարեր  
վեներական ախտերն ու սիֆիլիս \*:

Աւելի ցաւալին այն է, որ այդպիսի մարդիկ  
ամուսնանում են առանց բժշկի խորհուրդն ու թոյլ-  
տութիւնն ստանալու:

Ո՞րքան վիշտ են պատճառում նրանք թէ  
իրանց և թէ զժրախտ կանանց:

Երբեմն ամուսինների մեջ աեղի են ունենում  
թիւրիմացութիւններ սեռական դործունեութեան  
վերաբերմամբ:

Սյդ թիւրիմացութիւններն առաջ են դալիս  
նրանից, որ աղամարդու սեռական ընդունակու-  
թիւնը փոփոխուում է, թուլանում է (պատճառը  
զեղիսութիւնն է), թէև երբեմն նո չի էլ աշխա-  
տում հասկանալ այդ փոփոխութեան պատճառն  
ու աստիճանը: Իսկ միամիտ կինը բոլորովին ան-  
տեղեակ է լինում այդ բանին:

Սյզպիսի գեղերում թշուառ կանայք զի-  
մում են գեղերի ու սրբերի օգնութեանը, բայց  
օգուտ չեն ստանում, որովհետեւ չարիքի խսկական  
պատճառն ինքը աղամարդն է իր երիտասարդա-  
կան զեղիս կենցաղավարութեամբ:

\*) Տես իմ «Վնչ է ժուժկալութիւնը» և «Դ Ենե-  
րական ախտեր» գրքոյիները:

Նատ հասկանալի է, որ կանոնաւոր գաստիա-  
րակութեամբ և խելացի միջոցներով կարելի է այդ  
չարիքների առաջն առնել կարելի է երեխայի ժա-  
ռանգական վատ արամագրութիւնը փոփոխել և  
փացած սովորութիւններն ուղղել:

Միայն անհրաժեշտ է, որ ծնողներն իրանց  
զաւակներին տան կատարեալ առողջութիւն, ուժե-  
ղացնեն նրանց կոմքը, ամրապնդեն նրանց ընտւո-  
թիւնն ու ձգառումը գեպի ազնիւն, լաւն ու բարին:

Ուժեղ կամք ու բնաւորութիւն ունեցող պա-  
տանին կկարողանայ զսպել իր կիրքը, պահպանել  
իր առողջութիւնն ու բարոյականութիւնը: Եւ այդ  
բանը պետք է սկսուի մանկութիւնից:

---

9.

Այդ հարցի լուծումը զործնական շատ մեծ  
նշանակութիւն ունի, որովհետեւ նրանից է կախ-  
ուած ապագայ սերնդի առողջութիւնը:

Դժբախտաբար մեր ծնողների ու գաստիա-  
րակների մեծամասնութիւնը չդիտէ, թէ ի՞նչ պէտք  
է անել, որպէսզի երեխաների ֆիզիքական գաս-  
տիարակութիւնը լինի կանոնաւոր ու առողջապա-  
հական, որպէսզի այդ գաստիարակութիւնը տայ  
երեխաներին առողջութեան ու հոգեկան լաւ յատ-  
կութիւնների ամենամեծ պաշարը:

Մեր գաստիարակներից ու ծնողներից շատերը  
ոչ միայն չեն աշխատում զարգացնել երեխայի սե-

ըր զէպի Փիղիքական վարժութիւնները, սյլ ընդհակառակը ձգտում էն Ճնշել այդ զգացմունքը, որը նոյնքան զօրեղ ու նշանաւոր է, որքան քաղցի ու ծարափի զգացմունքները:

Նրանք սիրում են, երբ երեխան նստում է հանգարտ ու լուս, երբ նու չի վազվզում, շարժումներ չի կատարում:

Հենց որ երեխան սկսում է խայտալ, ուրախութիւնից վեր-վեր թռչկոտել կամ բացականչել նրան խկոյն յանդիմաննում ու հանգստացնում են:

Եատ հասկանալի է, որ այդպիսի վերաբերմունքը հենց սկզբից կճնշել ֆիղիքական վարժութիւններ ու շարժումներ կատարելու ցանկութիւնը:

Բայց շարժումներ կատարելու պահանջը շտազօրեղ է երեխայի մէջ: Առողջ երեխան, միայն իր բնական հակումներին հետեւելով, շարունակ վազվզում, թռչկոտում, մաղլցում է:

Մնողները պարտաւոր են քաջալերել ու ցանկալի ուղղութիւն տալ երեխայի այդ հակումներին և ոչ թէ Ճնշել ու արդելել:

Ֆիղիքական դաստիարակութեան դիմաւոր նպատակը պէտք է լինի զարգացնել երեխայի մէջ սէր զէպի ֆիղիքական վարժութիւնները:

Առանց այդպիսի սիրոյ երեխան կարող է ձանձրանալ յիշեալ վարժութիւններից:

Այդպէս ուրեմն առանց սիրոյ, միայն ստիպողական միջոքներով չի կարելի ցանկալի նպատակին հասնել:

Ահա այդ պատճառով պէտք է ընարել այն-  
պիսի վարժութիւններ, որոնք զբաւում և զուար-  
ձութիւն են պատճառում երեխաներին:

Ուրախութիւնն ու հրձուանքը զրգուում են  
մեր նեարդային համակարգութիւնը, արագացնում  
են շնչառութիւնը, ուժեղացնում են արեան շրջա-  
նառութիւնը և այդպիսով աւելացնում են մեր  
ոյժն ու եռանդը:

Ֆիզիքական վարժութիւնները պէտք է երեխա-  
յին միշտ էլուրախութիւն ու հրձուանք պատճառեն:

Եյն ժամանակ երեխային պէտք է տալ լիա-  
կատար ազատութիւն, այսինքն պէտք է ցոյց տալ  
որ նու ազատ-համարձակ ծիծաղի, իր հրձուանքն  
արտայայտէ:

Միայն այդ գէպօւմ մարմնամորդութիւնը  
կհասնի իր նպատակին—կկազդուրէ երեխայի ա-  
ռողջութիւնը:

Ֆիզիքական վարժութիւնները պէտք է լի-  
նին պարզ հեշտ և մատչելի թէ թուլակազմ և  
թէ ուժեղ երեխաների համար: Հակառակ գէպ-  
օւմ թոյլերը վերջ ի վերջոյ կձանձրանան և նոյն  
իսկ կզգուին այդ զբաղմունքից:

Ահա այդ պատճառով աւելի զերազասելի են  
վազելը, թռչկոտելը, գնդակ և ուրիշ խաղեր խա-  
զալը և այլն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մեծ նշա-  
նակութիւն ունին այն խաղերը, որոնք ազդում են  
մարմնի բոլոր անդամների, այսինքն սրաի, թռքե-  
րի, ստամոքսի և նեարդների վրայ:

Առողջութիւնը կախուած է ոչ թէ մկանների ոյժից, այլ բոլոր անդամների ներգաշնակ զարդացումից ու գործունեութիւնից:

Եթէ եխեխային ստիպենք արագ վաղելով մի փոքրիկ տարածութիւն անցնել, այն ժամանակ նրա յոդնածութիւնը կարտայայտուի ոչ թէ ոտների ցաւով ու անզօրութեամբ, այլ ուժեղ շնչառութեամբ, սրտի արագ բարախումով և այլն, այսինքն վաղելը կազդէ նրա ամրողջ օրգանիզմի վրայ:

Սրտի արագ բարախումից կարտգանայ արեան շրջանառութիւնը և ամբողջ մարմնի, այսինքն ուղեղի, ներգերի և մկանների սննդառութիւնը կաւանայ:

Արագ շնչառութիւնից կուժեղանայ թոքերի գործունեութիւնը. նրանց մկանները կղարգանան և վերջապէս կրծքի վանդակը կմեծանայ: Իսկ, ինչպէս յայտնի է, կրծքի վանդակի մեծութիւնը ցոյց է առլիս առողջութեան աստիճանը:

Այդ օրինակից երեւում է, որ ընդհանուր աղցեցութիւնը կախուած է նրանից, թէ գործողութեան ժամանակ որքան մկաններ են մասնակցում:

---

Ե.

Ֆիզիքական դաստիարակութեան դիսաւոր նպատակն է լինելու երեխայի առողջութիւնը:

Ահա այդ պատճառով պէտք է դերադասել բացօդեայ վարժութիւնները, որոնք շատ մեծ օգուտ են հասցնում երեխայի առողջութեանը:

Եթէ ֆիզիքական վարժութիւնները փակ սենեակում կատարուին, այն ժամանակ օդը փոշիով կլցուի և շատ վատ աղջեցութիւն կռւնենայ:

Բաց օդից վախենալը ամենավետսակար նախապաշարումներից մէկն է:

Թող երեխանները ձմեռ գարուն համարձակ զրօննեն, վազգվեն ու թռչուան բաց երկնքի տակ, նրանց ոչ մի վնաս չի պատահի: Զէ՞ որ կանոնաւոր պայմաններում՝ սառոյց խաղալիս երեխանները չեն մրսում:

Այդ խաղը կարելի է սկսել 5 աարեկան հասակից:

Բայց միշտ պէտք է չափաւորութիւն պահպանել որովհետեւ չափից դուրս գործածուող ֆիզիքական վարժութիւնները շատ վատ են աղջում զեռահաս երեխանների առողջութեան վրայ:

Խաղերի չափաւորութիւնը կզարդացնէ երեխայի ուշադրութիւնն ու դիտակցութիւնը:

Ֆիզիքական ծանր աշխատանքը կարող է ծռել կորացնել նրանց ողնաշարը, որովհետեւ մինչև 14—15 տարեկան հասակը ոսկորները փափուկ են լինում:

Դրանից ի միջից այլոց առաջ է դալիս հասակի կարճութիւնը:

Օրինակ եթէ զիւղերում պատահումնեն ցածր հասակով ու կորացած մէջքով մարդիկ, դա ցոյց է տալիս, որ նրանք երեխայ ժամանակ շատ են տանջուել ծանր աշխատանքից:

Լաւ առողջութիւնն անհրաժեշտ է թէ տղա-

մարդկանց և թէ կանոնց համար, ուստի կանայք էլ պէտք է գործածեն ֆիզիքական վարժութիւններ:

Սակայն չպէտք է մռունալ, որ սպորտի բոլոր տեսակներն էլ վնասակար են:

Մեղ հարկաւոր են առողջ ու վայելչակազմ մարդիկ և ոչ ըմբիշներ:

Ֆիզիքական ամեն մի ուժասպառութիւն վնասակար է երեխայի համար:

Վարժութիւնը պիտի կատարուի սիրով և ոչ թէ լարուած կամքի ուժով:

Խաղացողի ջղերը չպէտք է ուժասպառ լինեն:

Մի որեւէ վարժութիւնից կամ խաղից լեռոյ երեխան պէտք է լինի ուրախ և կայտառ:

Շատ ընտանիքներում և գլոբոցներում՝ մարմնամարզութեան համար առանձին գործիքներ կան — (օրինակ՝ օղակներ, ուղիղ և թէք սանդուխքներ, արապեցիաներ և այլն) — բայց այդպիսի մարմնամարզութիւնը չափազանց դժուար և բարդ է լինում; շուտով ձանձրացնումէ երեխաներին և հետեւ պէս իր խսկական նպատակին չի հասնում:

Կան երեխաներ, որոնք շատ սիրում են օղակների վարժութիւնը:

Նրանց ցանկութեանը բաւականութիւն տալու համար կարելի է օղակներ ամբացնել դոներից մեկի վրայ և թոյլ տալ երեխային օրական 5—6 անգամ և իւրաքանչիւր անգամին 5—6 վարժութիւն կատարել:

Իհարկէ միշտ էլ սենեակի օդը պէտք է լինի մաքուր, այսինքն վարժութիւնից առաջ պէտք է բաց անել լուսամուտը կամ օգանցքը:

Սակայն չպէտք է մոռանալ, որ գործիքների վրայ կատարուած մարմնամարզութիւնն աւելի քիչ օդուտ է տալիս, քան թէ ֆիզիքական միւս վարժութիւնները, որովհետեւ այդպիսի մարմնամարզութիւնն աւելի դժուար է, աւելի շատ եռանդ է պահանջում և շուտ է յօդնեցնում:

Թերեւս օգտակար լինի թոկի կամ «փայտէ ձիու» (կօնալա) վրայից թռչկուելը:

Եյս դէպքում խաղացողներից իւրաքանչիւրը կարող է որոշել իր ոյժի և առողջութեան աստիճանը, որովհետեւ վարժութեան ժամանակ գործում Էն զրեթէ բոլոր մկանները:

Երեխանների համար աւելի դուրեկան է այդ վարժութիւնը, քան թէ գործիքներով կատարուած բարդ մարմնամարզութիւնը:

Եռեկական մարմնամարզութիւնն առողջապահական մեծ նշանակութիւն չունի. Նրա անմիջական նպատակն է հիւանդներին և դիսաւորապէս հիւանդ երեխաններին բժշկելը:

Օրինակ, նրա միջոցով կարելի է ուղղել ծուռ ողնաշարը, կարելի է բժշկել ստամքսային մկանների թռւլութիւնը և այլն:

Յամենայն դէպս արհեստական ոչ մի վարժութիւն չի կարող այնքան օդուտ, այնքան ուժախութիւն ու հրձուանք պատճառել երեխային, որքան

զանազան խաղերի ժամանակ կատարուած վարժութիւնները:

Է.

Առողջապահութեան համար ամենալաւ վարժութիւններն են բացօգեայ խաղերը, մանսաւանդ վազվզելը:

Դրանք զրաւում են երեխաններին և մեծ բաւականութիւն են պատճառում նրանց:

Ահա այդպիսի խաղերի միջոցով կարելի է զարգացնել երեխայի սերը դէպի ֆիզիքական վարժութիւնները:

Վազելու համար բազմաթիւ խաղեր կան, որոնք յարմարեցրած են իւրաքանչիւր հասակի ու կազմուածքի, այսինքն կան առանձին-առանձին խաղեր՝ թոյլ կամ առողջակազմ երեխանների, աղջեկների, մանուկների, պատանինների և հասակաւորների համար:

Եյլ խաղերից իւրաքանչիւրը պատճառում է ահաղին ուրախութիւն, իսկ ուրախութիւնն, ինչպէս ասացինք, արագացնումէ բոլոր անդամների սննդառութիւնը:

Դրանց մի առաւելութիւնն էլ այն է, որ վազելուց յետոյ խաղացողները հանդիսաւ են առնում և ապա նորից խաղն սկսում, այնպէս որ չափազանց ուժասպառ լինելու ոչ մի վտանգ չկայ:

Վերջապէս միշտ էլ կարելի է կանգնեցնել հանդարտեցնել չափազանց ոգեսրուած խաղացո-

զիս, թէե այդ միջոցն այնքան էլ ցանկալի չէ, որովհետեւ առանց ոգեսրութեան խաղն իր զրաւչութիւնը կկորցնէ:

Առողջ երեխան չի կարող ապրել առանց ոգեսրուելու, առանց զրաւուելու:

Եթէ խաղի միջոցին անառեղի կերպով ընդհատենք այդ ոգեսրութիւնը, այն ժամանակ երեխան կախրի և վերջը այս կամ այն չարութեամբ կզրաւուի:

Ողեսրուելուց ու զրաւուելուց ոչ ոք չի կարող ազատ մնալ: Խելացի զասափարակութեան պարտականութիւնն է մի օգտակար ուղղութիւն տալ այդ զգացմունքներին:

Երեխաների հետ խիստ վարուելը, խաղալ ու ոգեսրուել արգելելը կարող են միայն սեռական վատ հակումները զարգացնել:

Ամենաչափ երեխաններն են դառնում նրանք, որոնց արգելումն խաղալ, ողեսրուել և զրաւուել այս կամ՝ այն բանով:

Բայց այդ չորսամմիններն չպետք է վատ երեխաններ համարել, որովհետեւ նրանք ոչ մի վատութիւն չունին:

Հարկաւոր է միայն աղատութիւն ու ուղղութիւն տալ նրանց ոգեսրութեանն ու հակումներին:

Սյդպիսի դէպքում նրանք կդառնան ամենալաւ խաղացողները—թէ դպրոցում և թէ ընտանիքում:

Խաղերի մի լաւ կողմն էլ այն է, որ նրանք զարգացնում են երեխայի եռանդն ու ուշադրութիւնը:

Աւրախսողին այն է, որ այդ բանը կատարւում  
է առանց մի որեւէ դժուարութեան, պրեթէ ան-  
նկատելի կերպով:

Եթէ զորա հետ միասին երեխան ստանայ հա-  
սարակ, բայց աննպարար կերակուր—(կաթ, թրո-  
չունների միս, մրգեղին: Թէյը, սուրճը և առհա-  
սարակ ողելից ըմպելիները վնասակար են)—մար-  
մինը արօրէ սառը ջրով ( $+18-20^{\circ}$ -R) և քնի  
 $+12-14^{\circ}$ -R բարեխստոնութիւն ունեցող ննջա-  
րանում, այն ժամանակ մենք կունենանք կատա-  
րեալ կտրիծներ:

Այդ բոլոր հանգամննքները շատ մեծ նշանա-  
կութիւն կունենան սեռական զդացմունքների զար-  
գացման ժամանակ:

Այդպիսի կեանք վարող երեխաները հեռու  
կմնան փառացած սովորութիւններից ու վնասակար  
ախտերից, որոնք մեր երիտասարդներին զեղի կո-  
րուստ են առնում:

Անկատակած խաղերն ունին նաև բարոյական—  
կրթական նշանակութիւն:

Նպաստակայարմար խաղի ընթացքում երե-  
խաները վարժւում են հնագանդութեան ու կար-  
գապահութեան:

Նրանք ճշութեամբ կատարում են խաղի կա-  
նոնները, հետեւում են փորձուած ընկերների խոր-  
հրդին, հնագանդուում են ինքնակամ՝ և զիտակցա-  
բար—մի խօսքով խաղերը կատարում են այն, ինչ  
որ անկարող են կատարել ամենամեծ պատիժն ու  
խստութիւնը:

Եթէ ՀԽ-քորդ գարում մենք չեինք հասկա-  
նում, կամ աւելի ճիշտն ասած, չեինք ուզում  
հասկանալ այդ Ճշմարտութիւնը, ժամանակ է, ար-  
դին զոնէ, այժմ հասկանալու:

Մեր թուլութիւնը նկատուումէ ամենուրեք  
և ամեն ժամանակ:

Այդ բանում մենք ինքներս ենք մեղաւոր,  
որովհետեւ կենսական կռւում՝ մենք ենք պատրաս-  
տում այգափիսի թոյլ անեռանդ ու արիութիւնից  
— հետեւապէս և բարցյական հիմունքներից զուրկ  
սերունդ:

Բարցյապէս արի ժողովուրդը միշտ գտել է  
և կզանի համամարդկային գաղափարներ, նա կաշ-  
խատի իրազործել այդ գաղափարները և այդպի-  
տով նսպաստել մարդկային առաջադիմութեանը:

---

Ժ.

Ֆիզիքական միւս վարժութիւններից մեծ ու-  
շաղրութեան արժանի է լող տալը, որովհետեւ նա,  
առաջ ընթելով խոր ներշնչում և արտաշնուում,  
նսպաստումէ կրծքի վանդակի զարդանալուն:

Լող տալը և առհասարակ գետում լողանալը  
պիտի տեսէ Յ—Յ բոպէ, այն ինչ շատերը լողանում  
են մինչև շրթունքների ու ամբողջ մարմնի կապ-  
տանալը, որ շատ վնասակար ու վասնգաւոր է:

Հենց մատաղ հասակից պէտք է երեխաններին լող  
տալ սովորեցնել, որովհետեւ լող տալու ժամանակ

կատարուած շարժութիւնները շատ հեշտ են և չեն  
յոդնեցնում:

Օգտակար է նաև թիավարութիւնը, որը միեւ-  
նոյն ժամանակ մի գեղեցիկ միջոց է կորացած ող-  
նաշարն ուղղելու համար: Դրանով զբաղուել պէտք  
է օրական 1—1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ, ի հարկէ ընդմիջութիւններով:

Եցր խաղի պատճառած մեծ բաւականութեան  
աւելացնենք և մաքուր ու թարմ օդը և այն ժա-  
մանակ կերեայ նրա ամբողջ նշանակութիւնը:

Երժէ աեսնել երեխաներին այդ մարմնամար-  
զութիւնից յետոյ:

Նրանց աշխոյժ գէմքն արտայսյառում է ու-  
րախութիւն և ախորժակը բացւումէ:

Երեխաները մեծ անհամբերութեամբ են սպա-  
սում հետեւալ օրուան, որպէսզի նորից սկսեն  
այդ զրաւիչ վարժութիւնը:

Հատ հասկանալի է, որ այդ օգտակար մար-  
մնամարզութեանը պէտք է մասնակցեն թէ մա-  
նուկները և թէ աղջեկները:

Հեծանիւով մանդալն էլ օգտակար է, բայց  
այդուն շատ մեծ զգուշութիւն է հարկաւոր:

Զարկոք է շատապել ողեարուել և վերջն ու-  
ժառապառ լինել:

Աւշադրութեան արժանի է այն հանգամանքը,  
որ հեծանիւով մանդալ սկսողները զիշերներն յա-  
ճախ երազազիճութիւն են ունենում:

Խելացի ծնողները պարտաւոր են իրանց զա-  
ւակներին հասկացնել սպորտից առաջացած վնաս-  
ները:

Օրինակ, սրավարժութիւնը հասակաւորների համար մի ախորժելի և օգտակար զբաղմունք է, իսկ գեռահաների համար —ընդկակառակը, որով հետեւ կարող է հետզհետեւ կորացնել նրանց թուլակազմը ողնաշարը:

Պարերն ել չափազանց օգտակար են, մանաւանդ որ նրանք զարգացնում վայելակազմութիւնը և մատչելի են բոլոր երեխաներին:

Իհարկէ այդ օդուան աւելի մեծ կլինի, եթէ պարերը աեղի ունենան ոչ փակուած սենեախներում, որտեղ երբեմն օդը ծանրանումէ և շնչառութեանը վեասում:

Սյու վերջին երեսյթն աւելի դպալի է լինում՝ մանաւանդ պարերեկոյթներում, որոնք բոլորովլին անհամապատասխան են մանկական հասակին:

Տիկինների և օրիորդների վերաբերմամբ կորրսարեր զեր է խաղում կորսեար, որը ձնշումէ նրանց մկանները և քայքայում առողջութիւնը:

Կորսեան ընդհանրապէս վեասակար է. դէ՞հ, արի ու այդ զրութեան մէջ զեռ պարիր մինչեւ շունչդ կտրուելը, ինչպէս անում են մեր օրիորդներից ու կանանցից շատերը:

Զարմանալի չէ ուրեմն, որ պարերի ժամանակ ուշագնացութեան ու նոյն իսկ յանկարծակի մահուան գէպքեր են պատահում:

Պարողների համար մի մեծ անցարմարութիւն է ներկայացնում՝ կանոնաւոր լուսաւորութեան (օրինակ թէկուզ ելէքտրական) և մաքուր օդի բացակայութիւնը:

Անա այդպիսի վատ պայմանների շնորհիւ  
մարդիկ պարելուց ստանում են միայն վետա և ոչ  
օգուտ ու առողջութիւն:

Բայց ըմբռանանք, որ առողջութիւնն է ոյժի  
անբաժան ընկերակիցը:

Ժ.

Առողջութիւնը ծնեցնումէ ոյժ և զարգաց-  
նում ու աճեցնումէ նրան:

Ոյժն էլ իր կողմից ծնեցնումէ առողջութիւնը  
և օրգանիզմին միջոց է տալիս եղած առողջու-  
թիւնը պահպանելու և մարդկային կորսատրեր  
հիւանդութիւնների հիմնական պատճառների դեմ  
կռուելու:

Ահա թէ ինչու մարդն իր ոյժն աւելացնելիս,  
աւելացնումէ և առողջութիւնը:

Մարդն իր ոյժն աւելացնել կարող է, եթէ  
մարդաքարերի վարժութիւններով աստիճանաբար  
ամրապնդումէ մկանները:

Սակայն այդ վարժութիւնները պիտի կա-  
տարուին որոշ սխտեմնվ, աստիճանաբար և խե-  
լացի կերպով:

Չափաղանցութիւնը միշտ և ամենուրեք վեա-  
սակար է:

Ոյժից վեր ծանրութիւն բարձրացնելիս, մարդ  
կարող է վետա հասցնել իր այս կոմը այն ներքին  
անդամին:

Նեսց որ նեարդերն <sup>\*)</sup> ուժտապառ եղան, իսկոյն պէտք է գալարեցնել վարժութիւնը, և դա պէտք է լինի ընդհանուր օրէնք ֆիզիքական բոլոր վարժութիւնների ժամանակ:

Նեարդերի յոգնածութիւնը ֆիզիքական վարժութիւնների ամենալաւ վերահսկիչն է:

Ոտով մանգալն էլ ֆիզիքական մի օդտակար վարժութիւնն է:

Որոշ սիստեմով կատարուող զրօսանքը չափագանց օդտակար է մանաւանդ այն մարդկանց, որոնք իրանց աղիառութեան պատճառով մանկական ու պատանեկական հաստկում մարմնամարզութեամբ չեն պարագել:

Այդպիսի զրօսանքը պէտք է կատարել հանգարատ, սովորական միջին քայլով, հանդիսաւ շունչ քաշելով—(մի քայլում՝ մօտաւորապէս 18 անգամ)՝ զլուխն ու մարմինն ուղիղ բռնած և առանց քայլերն շատագեցնելու կամ դանդաղեցնելու:

Իհարկէ աւելի օդտակար է զրօսանքը կատարել ազատ ու մաքուր օդում, այսինքն դաշտում, անտառում և ոչ թէ քաղաքի կեղտոտ փողոցներում:

Ժամացոյցի սլաքը ցոյց կտայ այն ժամանակը, որն անցել է զրօսանքի սկզբից մինչև յոգնածութեան հասնելը:

Ենթաղրենք, թէ այդ ժամանակը հաւասար է քառորդ ժամի կամ 20 քայլի: Այդ գեղաքում՝

<sup>\*)</sup> Տես «Մեր նեարդերը» գրքոյից:

Երբեք զրանից աւել չպէտք է տե՛կ զըօսանքի վարժութիւնը:

Սյդպիսի զրօսանքը պէտք է կրկնել իւրաքանչիւր օր, մինչև որ յոզնածութիւն բոլորովին չղգացուի:

Դրանից յետոյ կարելի է չ բռպէ աւելացնել և նորից շարունակել:

Միշտ ել մեր ուղեցոյցը պէտք է լինի յոդնածութեան զգացմունքը:

Աւելի լաւ է զրօսանքները կատարել առաւօտները:

Հարկաւոր է քնից վերկենալ՝ ամսուը ժամը 6-ին, իսկ ձմեռը 7-ին:

Քնից վերկենալուց յետոյ պէտք է նախ և առաջ մարմինը արորել սառը ջրում—(սկզբում կարելի է տաք ջրում)—թաթախած քայժանով, թեթև կերպով նախաճաշել—(կաթ և 2 ձու կամ քիչ միս) —և ապա ճանապարհ ընկնել գեղի զբոսավայրը:

Զրօսանքը պէտք է առել ամենաշատը և ժամը Սյդպիսով մարդ ուժասպառ չի լինի:

Իհարկէ շատ բան կախուած է զրօսանքի տեսակից ու պայմաններից:

---

ԺԱ.

Մենք շատ անգամ արհամարում կամ գոնէ չենք գնահատում այն ամենը, ինչ որ հասարակ է, ինչ որ բնական ու սովորական է և ընդհակառակը

մեր փրկութիւնը որոնում ենք այնտեղ, որտեղ  
թագնուած է արտասովոր մի բան:

Այդ նոյն երեսյթը կատարւումէ և մեր տ-  
ռողջապահութեան, մեր թուլութեան հարցում:

Կեանքի հիմնական պայմանն ու նորատակը  
պէտք է լինի՝ զարգացնել մեր ոյժերն ու ընդունակու-  
թիւնները և օգտակար գործածութիւն տալ նրանց:

Այդ հանգամանքն անուշաղիր թողնելը կբայ-  
քայէ մեր առողջութիւնը, կոչնչացնէ մեր բաղզա-  
ւորութիւնն ու հոգեկան կատարելագործութիւնը:

Մեր մարմնի ներքին ոյժերը, կանոնաւոր զար-  
գացումն ու գործածութիւն ստանալով, կարող են  
շատ ու շատ խանդարումների և հիւանդութիւն-  
ների առաջն առնել:

Այդ բնակուն ձանապարհով կարելի է կատա-  
րելագործուել, կազդուրուել, փորձանքներից ու հի-  
ւանդութիւններից հեռու մնալ և հոգեկան ու մտա-  
ւոր կեանքի համար հող պատրաստել:

Խելացի կենցաղավարութեան համար պէտք է  
օգտուել թէ հոգեկան և թէ մարմնական ոյժերից:

Հոգեպէս անդորր ու մարմնով ծցլ մարդն  
իզուր է աշխատում հոգեկան ու մարմնական կա-  
տարեալ զուտրճութիւն ստանալու:

Կեանքի քաղցր պտուղները միայն խելացի  
գործունեութեան արդիւնքն են կազմում:

Առանց այդպիսի գործունեութեան մարմնի  
անդամների ֆունկցիաները կը խանդարուին, զգայ-  
նականութիւնը կը բթանայ և վերջապէս կառաջա-  
նայ վաղաժամ մահ:

Պարզ է ուրեմն, որ մարմնի նպատակայարմաք շարժումներն անպայմոն հարկաւոր են քայբայուած առողջութիւնը վերականգնեցնելու և պահպանելու համար:

Զբասանքները, ճանապարհորդութիւնը, ձիով ման զալը, սրավարժութիւնը, զաշտային և այլ կազզուրիչ տշխատանքները գժուար իրագործելեն և շատերին մասշելի չեն:

Ներկայ կեանքի բարզութեան և ժամանակի սղութեան պատճառով նոյն իսկ հասարակ ման զալն անհնարին է զարձել շատերի համար, որովհետեւ մարզկային միտքն այլ բաներով է զբաղուած, այլ բաների է առաւելութիւն առլիս:

Սյու երեսյթն առաջ է բերել ծանր ու ցաւալի հետեանքներ, ուստի անհրաժեշտ է կոռւել նրա դեմ՝ անհրաժեշտ է առանձին միջոցներ ձեռք առնել:

Քաղաքակրթութեան և ժամանակակից կեանքի պահանջների համեմատ մարզը կարող է յարմարուել բնութեան օրէնքներին, կարող է պահպանուել նրա հարուածներից ու կորստարեր հետեանքներից:

Իրա ամենաօդատակար, ամենանպատակայարմաք միջոցն է մարմնամարզութիւնը, այսինքն մկանների այն վարժութիւնները, որոնք նպաստում են անհատի ֆիզիքական կրթութեանն ու առողջութեանը:

Դա բժշկական մարմնամարզութիւնն է, որը կարող է գործածուել իրբե հեշտ միջոց մի որևէ է

հիւանդութիւնից, ախարից կամ՝ պակասութիւնից  
բժշկուելու կամ նախազգուշանալու համար:

Այսուամենայնիւ երբեք չտիտղանցութեան մէջ  
ընկնել չե կարելի:

Դեռ մանուկ հասակում կարապյացուի ֆի-  
զիքական վարժութիւնների ստիտութեան ազգե-  
ցութիւնը:

Այդ գեղեցում մարմինը չե համում իր կա-  
տարեալ զարգացմանը, նա աճում է անհամաչափ  
ու անկանոն կերպով:

Երբեմն այս կամ՝ այն անգամի ֆիզիոլոգիա-  
կան գործունեութիւնն է խանդարուում, երբեմն ել  
առաջ է զալիս մի որեւ է հիւանդութիւն, որը  
վտանգ է սպառնում մարդկային ծաղիկ կեանքին:

Շատ անգամ մարդկային օրգանիզմը կարողա-  
նում է անզօր զարձնել անգործութիւնից առաջա-  
ցած վաս հետևանքները: Բայց զա շարունակուում  
է միայն մինչև միջին հասակը:

Եթէ ոչ վազ, զո՞նէ այդ ժամանակ հրապարակ  
էն զալիս այսպէս անուանեալ «միջին հասակի հի-  
ւանդութիւնները» — (օր. ստամքսի, աղեքների և  
նեարդերի հիւանդութիւն և այլն):

Երանի նրան, ով իր ժամանակին հասկանում  
և կատարում է բնութեան օրէնքները, որովհետեւ  
աւելի հեշտ է նախազգուշանալ քան թէ բժշկուել:

Եթէ մենք հենց սկզբից հոդ չանենք մեր  
մարմինի վրայ, այն ժամանակ տանջանքն ու հիւան-  
դութիւնը կյիշեցնեն մեր անկատար թողած պար-  
ապականութիւնը, բայց արդէն ուշ կլինի:

Ահա այդ է իրական կեանքի ցաւալի պատկերը, որի նշաններն երեսում են այնքան յաճախ, այնքան զգալի կերպով...

---

ԺԲ.

Սնբառարար ֆիզիքական վարժութիւնները կազմում են եթէ ոչ միակը, զոնէ զլիաւորը այն պատճառներից, որոնցից առաջ են զալիս վերսիշեալ բազմազան հիւանդութիւնները:

Սուողջապահական մարմնամարզութիւնն անպայման հարկաւոր է բոլոր այն մարդիանց, որոնք իրենց զբաղմունքի ու կենցազավարութեան շնորհիւ անկարող են ֆիզիքական ուրիշ վարժութիւններ կատարել:

Լառ է, եթէ զրանք զոնէ ուներով և ման դալիս և ոչ կառքով:

Սյօպիսի մարդիկ եթէ անուշադիր թողնեն մարմնամարզութիւնը, այն ժամանակ շուտով կծերանան, մասաւորապէս կրթանան. նրանց մարմինը կգառնայ թոյլ իսկ անդամները — դանդաղաշարժ:

Շատ պարզ է, որ այգպիսի պայմաններում նրանք չեն կարողանայ իշխել իրանց «ես»-ի վրայ, ուղղել հոգեկան ու ֆիզիքական թերութիւնները և ուղղութիւն տալ իրանց ընդունակութիւններին:

Բայց երբէք ուշ չէ ինքնակատարելազործութիւն սկսելը: Ի՞նարկէ որքան շուտ, այնքան լաւ:

Նատ բան կախուած է միայն անհատի կամքից, որովհետեւ ընտանեկան մարմնամարզութիւնը մաս- չելի է բոլորին:

Նա զրեթէ ամեն ժամանակ հնարաւոր է թէ տանը, թէ սենեակում և թէ պարտիզում:

Նրա համար հարկաւոր չէ ոչ մի դործիք, ոչ մի կողմանկի օգնութիւն:

Նա երբէք չի խանգարէ ֆիզիքական միւս վար- ժութիւններին, ընդհակառակը առելի կնպաստէ և կլրացնէ:

Սիստեմատիքական կատարուող ընտանեկան մարմնամարզութիւնը շատ լաւ, շատ օգտակար մի- ջոց է կուլառւրական կեանքի ամենաբարձր, ամե- նակառարեալ ներդաշնակութեան համնելու համար:

Ահա այդ ստանդառով նրանից պէտք է օգտուեն և այն մարդիկ, որոնք իրանց տաօրեայ կեանքում էլ բաւականաչափ վարժեցնուեմնն մարմնի տռան- ձին անդամները:

Եթէ ցանկալի է մարմնամարզութեամբ մի որևէ բժշկական նպաստակի հանել, այն ժամանակ պէտք է նախապէս խորհրդակցել բժշկի հետ և այդ խոր- հրդի համեմատ ընտրել մարմնամարզութեան այս կամ այն առանձիւ:

Սցդպիսի վարժունքը պէտք է լինի ընդհանուր օրէնք բոլորի համար:

Յիշեալ խորհրդին հետեւելով, նոյն իսկ ամենա- զբաղուած մարդը կարող է բաւականութիւն առաջնապա- տակայարմար մարմնամարզութեան պահանջներին:

Բաւական է դրանով զբագուել օրական 1—2  
անգամն իւրաքանչիւր անգամին քառորդ ժամ:

Եթեմն բժիշխները պատուիրում են շարժումներ  
կատարել բայց անհասի բարի կամքը խորհրդուների  
է հանգիստում և նու անկարող է լինում բժշկի  
պատուերներն իրագործել:

Այդ բանն աւելի նկատելի է մանաւանդ կա-  
նանց վերաբերմամբ:

Մարմնամարզական վարժութիւնները վեասա-  
կար են արենանոսութեան, յղիութեան և զրգուուած  
ու աննդային դրութեան ժամանակի:

Բժշկական մարմնամարզութիւն կատարելիս  
պէտք է պահպաննել հետեւեալ կանոնները,

1. Գրքոյկի վերջում՝ զետեղած պատկերները\*)  
ցոյց են տալիս այն վարժութիւնները, որոնք ընդ-  
հանուր առմամբ մատչելի են իւրաքանչիւր սեռի ու  
հասակի համար:

2. Համապատասխան վարժութիւնը պէտք է  
շարունակել մշտապես, մինչև որ նու տոօրեայ սո-  
վորութիւն դառնայ:

3. Մարմնամարզութեամբ պէտք է պարապել  
ուտելուց առաջ՝ լինի զանախաճաշից՝ ձաշից կամ  
ընթրիքից առաջ—այդ միենայն է:

Բայց հարկաւոր է մարմնամարզութիւնից յե-  
տոյ քառորդ ժամ՝ սպասել և ապա նոր կերակուր  
ընդունել, որպէսզի մկանների զրգուուած դրութիւ-  
նը հանգարառուի և մարսողութեանը չխանգարե:

\*) Դաստ է յերերի, անդրածի և Կիմայերի:

Նոյն նպաստին համելու համար պետք է վարժութիւնից առաջ միզապարին ու աղիքները դասարկել:

4. Նախապէս պետք է հանել այն հագուստ ները, որոնք ճնշում են վեղը, փորը և կուրծքը:

Առանձնապէս օգտակար է, երբ մարդ վարժութիւնը կատարում է առանց շապկի և արեգակի տակ:

5. Երբ շնչառութիւնը և սրտի բարախումը դդայլի կերպով արագանում է, պետք է քիչ հանդիսա առնել, որպէսզի սիրտն ու թոքերը հանգարառուին:

Ներշնչումն ու արատշնչումը պետք է կատարել կամաց, խոր և լիակատար:

Իւրաքանչիւր վարժութիւն կորելի է կրկնել 3—5 անգամ:

6. Նարժումները պետք է կատարել հանգարա, և սահուն, հնար եղածի չափով հետեւելով նկարած օրինակին:

7. Վարժութիւնները պետք է կատարել որոշ հետեւողականութեամբ և չափաւորութեամբ:

Սյու շարժումները ցաւի կամ յոդնածութեան ու մի հետք չպետք է թողնեն մկանների վրայ:

Մկանների չափազանց գործունեութիւնը նոյնքան վնասակար է, որքան և անդործութիւնը:

8. Երբ այդ վարժութիւնները կնեշանան և սովորութիւն կառնան, այն ժամանակ կարելի է զործ ածել մարզաքարեր: Առհասարակ մէկը միւսին չի խանգարէ:

9. Մարմնամարզութեան ժամանակ պէտք է շնչել մաքուր ու թարմ օդ:

Ահա այդ պատճառով օդտակար է վարժութիւններ կատարել պարտիզում, պատշգամբում կամ դոնէ մաքուր սենեակում, նախաղէս բաց անելով լուսամուտները:

Մրսելուց չպէտք է վախենալ, որովհետեւ կատարուող շարժումներն ամենալաւ միջոցներն են զրա դէմ:

10. Առողջութեան համար շատ օդտակար է հասարակ խառը կերակուրը — (իսթ, ձու, միս, ձուկ, հաց և կանաչեղին):

Միշտ պէտք է չտփաւոր ուտել որպէսզի ուտելուց յետոյ ելքիւ ախորժակ մնայ:

Ճաշից 2—3 ժամ յետոյ կարելի է քիչ քնել:

Եաւ օդտակար է, մեր պասերը պահպանելը, այսինքն չորեքշարթի և ուրբաթ օրերը մսեղին ու իւղեղին կերակրից հրաժարուելը:

Ծխելն ու ողելից ըմպելիքները վնասակար են. նրանք կորսարեր աղպեցութիւն են ունենում՝ մանաւանդ երեխաների ու դեռահասների վրայ:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԵՒՄ

Ամբողջ Եւրոպայում Անգլիան վաղուց արդէն առաջին տեղն է զրաւել ֆիզիքական վարժութիւններով:

Այստեղ շատ գործածական էն լող տալը, սղղալ սառոցի վրայ ու հեծանիւով ման դալը:

Այլպիսի գաստիարակութեան արդիւնաւետութիւնը խոստովանում էն ամենքը:

Անգլիացինները վաղուց յայտնի են իրանց ևսանդով ու տոկունութեամբ:

Բարոյապէս էլ նրանք աւելի բարձր են քան թէ ֆրանսիացիններն ու գերմանացինները:

Եւրոպական միւս ազգերն էլ հետզնեաէ ըմբռնում են, որ երեխանների գաստիարակութեան համար չափազանց մեծ նշանակութիւն ունին խաղերը:

Մեզանում—Խուսաստանումէլ բացօքեայ խաղեր մոցնելու փորձեր են կատարւում:

Սրբէն Պետերբուրգում ու Մոսկուայում հիմնուել են առանձին ընկերութիւններ, որոնց նպատակն է բացօքեայ խաղեր տարածելն ու կանոնաւորելը:

Գրա համար դպրոցներին կից շենումնեն ծառագարդ և ցանկապատով շրջապատուած հրապարակներ, որանու կատարւում են ֆիզիքական զանազան խագեր ու վարժութիւններ:

Պէտք է հետեւել անգլիայի օրինակին, որն իր խելացի դաստիարակութեամբ պատրաստում է օգտակար և հոգով ու մարմնով առողջ քաղաքացիներ:

Դաստիարակութիւնը գործ ունի առանձին անհանների հետ, ուստի նու աչքի առաջ պիտի ունենայ զրանցից իւրաքանչիւրի անձնական յուստիկութիւնները և ընդունակութիւնները:

Բայց որովհետեւ դաստիարակուող երեխան կամ պատանին ապրում է հասարակութեան մէջ, շփուում է ուրիշների հետ, այդ պատճառով նրա վրայ ազդեցութիւն ունի և ընդհանուր — հասարակական կեանքը:

Մեր սրբազան պարագանութիւնն է աչքի առաջ ունենալ այդ բոլոր հանգամնեքները և նպատակայարմար դաստիարակութեամբ երեխային հասցնել այն գրութեանը, որ նու հասկանայ իր հայրենիքի ու հասարակութեան շահերը, վարժուի անձնազնութեան ու օգտակար գործունեութեան:

Այդ բանն անհրաժեշտ է, մանուանող այն պատճառով, որ ժամանակակից կեանքի պայմաններն այնքան բարդ, այնքան բազմաթիւ են երեխան ապագայում գործ պիտի ունենայ զրանցից իւրաքանչիւրի հետ:

Այսաեղ նորից մի շատ ծանր հարց է առաջ գալիս, թէ ծնողներն ու դաստիարակներն ի՞նչ պէտք է անեն, ի՞նչպիսի զէնք պիտի տան մատաղ սերնդին, որպէսզի վերջինս կարողանայ կռուել կեանքի բազմաթիւ անախորժութիւնների ու սնապասելի երեցյթների դէմ, որպէսզի նա դոյութեան կռուում գննէ քիչ ատմաջուի, քիչ ձնշուի:

Ահա այդ ծանր հարցը լուծելու համար պէտք է իրրե մի սուրբ օրէնք յիշել որ առողջ խելքը, առողջ հոգին միայն առողջ մարմնի մէջ կարող էն լինել, որ առողջութիւնն է մարդկային կեանքի հիմքը կաղմաղը:

Միայն առողջ հոգի ու մարմին ունեցող մարդը կարող է կանոնաւոր կեանք վարել և իր աղջին ու հայրենիքին օգտակար լինել:







